Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-910-09.09.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 87-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 6-րդ կետը «քսայուղը» բառից հետո լրացնել «: Սույն կետի կիրառության իմաստով քսայուղը ներառում է ԱՏԳ ԱԱ 2710 19 7 - 2710 19 9 ծածկագրերին դասվող ծանր թորվածքները և ԱՏԳ ԱԱ 3403 19 100 0, 3403 19 900 0, 3403 99 000 0 ծածկագրերին դասվող քսանյութերը» բառերով,

2) 7-րդ կետը «բենզինը» բառից հետո լրացնել «: Սույն կետի կիրառության իմաստով բենզինը ներառում է ԱՏԳ ԱԱ 2710 12 ծածկագրին դասվող թեթև թորվածքները և նյութերը, այդ թվում՝ շարժիչային բենզինը, բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 12 310 0 ծածկագրին դասվող ավիաբենզինի» բառերով,

3) 8-րդ կետը «դիզելային վառելիքը» բառերից հետո լրացնել «: Սույն կետի կիրառության իմաստով դիզելային վառելիքը ներառում է ԱՏԳ ԱԱ 2710 19 1 - 2710 19 6 ծածկագրերին դասվող միջին և ծանր թորվածքները, բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 210 0 ծածկագրին դասվող ավիավառելիքի» բառերով,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-ին և 10.2-րդ կետերով.

«10.1) նյութերը (հավելանյութերը): Սույն կետի կիրառության իմաստով նյութերը (հավելանյութերը) ներառում են ԱՏԳ ԱԱ 3811 ծածկագրին դասվող հակաճայթիչները, հակաօքսիդիչները, խեժագոյացման արգելակիչները, թանձրացուցիչները, հակաքայքայիչ նյութերը և պատրաստի այլ հավելանյութերը՝ նախատեսված նավթամթերքների (ներառյալ՝ բենզինը) կամ այլ հեղուկների համար, որոնք օգտագործվում են նույն նպատակներով, ինչ նավթամթերքները.

10.2) արգելակման, հիդրավլիկ և այլ հեղուկները՝ պատրաստի, նախատեսված հիդրավլիկական փոխանցիչների համար, 70% զանգվածային բաժնից պակաս՝ բիտումային ապարներից ստացված նավթ կամ նավթամթերքներ չպարունակող կամ պարունակող, որոնք դասակարգվում են ԱՏԳ ԱԱ 3819 00 000 0 ծածկագրին.»:

Հոդված 2. Օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակում՝

1) 16-րդ տողի «Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի» սյունակում «2710 19 710 0 - 2710 19 980 0» ծածկագրերը փոխարինել «2710 19 7 - 2710 19 9» ծածկագրերով,

2) 18-19-րդ տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18.	2710 19 1 - 2710 19 6	դիզելային վառելիք	1 տոննա	14200
19.	2709 00 2710 20 2710 9	հում նավթ, նավթամթերք	1 տոննա	29450»

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 19.1-ին և 19.2-րդ տողերով.

«19.1.	3811	նյութեր (հավելանյութեր)	1 տոննա	43600
19.2.	3819 00 000 0	արգելակման, հիդրավլիկ և այլ հեղուկներ՝ պատրաստի, նախատեսված հիդրավլիկական փոխանցիչների համար, 70% զանգվածային բաժնից պակաս՝ բիտումային ապարներից ստացված նավթ կամ նավթամթերքներ չպարունակող կամ պարունակող	1 կգ	550»:

Հոդված 3. Օրենսգրքի 88-րդ հոդվածի 7-րդ մասում «բենզինի» բառերից հետո լրացնել «և նյութերի (հավելանյութերի)» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 346-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի 2-րդ կետում և 3-րդ մասում «հարկային տարվա որևէ ժամանակահատվածում» բառերից առաջ լրացնել «տվյալ հարկային տարվա կամ տվյալ հարկային տարվան նախորդող» բառերը,

2) 10-րդ մասի 1-ին կետի «գ» պարբերությունում և 11-րդ մասում «տարբեր տեսակների» բառերը փոխարինել «նույն կամ համանման» բառերով, իսկ «տարբերությունները» բառից հետո լրացնել «՝ պայմանով, որ ապրանքների ձեռք բերման գների կամ իրացման գների միջև տարբերությունը չի գերազանցում 20 տոկոսը» բառերը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 1-3-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~Առաջին ընթերցում~~

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-910-09.09.2024-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 87-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 6-րդ կետը «քսայուղը» բառից հետո լրացնել «: Սույն կետի կիրառության իմաստով քսայուղը ներառում է ԱՏԳ ԱԱ 2710 19 7 - 2710 19 9 ծածկագրերին դասվող ծանր թորվածքները և ԱՏԳ ԱԱ 3403 19 100 0, 3403 19 900 0, 3403 99 000 0 ծածկագրերին դասվող քսանյութերը~~, բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 980 0 ծածկագրին դասվող ավիայուղի~~» բառերով,

2) 7-րդ կետը «բենզինը» բառից հետո լրացնել «: Սույն կետի կիրառության իմաստով բենզինը ներառում է ԱՏԳ ԱԱ 2710 12 ծածկագրին դասվող թեթև թորվածքները և նյութերը, այդ թվում՝ շարժիչային բենզինը, բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 12 310 0 ծածկագրին դասվող ավիաբենզինի» բառերով,

3) 8-րդ կետը «դիզելային վառելիքը» բառերից հետո լրացնել «: Սույն կետի կիրառության իմաստով դիզելային վառելիքը ներառում է ԱՏԳ ԱԱ 2710 19 1 - 2710 19 6 ծածկագրերին դասվող միջին և ծանր թորվածքները, բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 210 0 ծածկագրին դասվող ավիավառելիքի» բառերով,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.1-ին և 10.2-րդ կետերով.

«10.1) նյութերը (հավելանյութերը): Սույն կետի կիրառության իմաստով նյութերը (հավելանյութերը) ներառում են ԱՏԳ ԱԱ 3811 ծածկագրին դասվող հակաճայթիչները, հակաօքսիդիչները, խեժագոյացման արգելակիչները, թանձրացուցիչները, հակաքայքայիչ նյութերը և պատրաստի այլ հավելանյութերը՝ նախատեսված նավթամթերքների (ներառյալ՝ բենզինը) կամ այլ հեղուկների համար, որոնք օգտագործվում են նույն նպատակներով, ինչ նավթամթերքները.

10.2) արգելակման, հիդրավլիկ և այլ հեղուկները՝ պատրաստի, նախատեսված հիդրավլիկական փոխանցիչների համար, 70% զանգվածային բաժնից պակաս՝ բիտումային ապարներից ստացված նավթ

կամ նավթամթերքներ չպարունակող կամ պարունակող, որոնք դասակարգվում են ԱՏԳ ԱԱ 3819 00 000 0 ծածկագրին.»:

Հոդված 2. Օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակում՝

1) 16-րդ տողի «Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի» սյունակում «2710 19 710 0 - 2710 19 980 0» ծածկագրերը փոխարինել «2710 19 7 - 2710 19 9» ծածկագրերով,

2) 18-19-րդ տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18.	2710 19 1 - 2710 19 6	դիզելային վառելիք	1 տոննա	14200
19.	2709 00 2710 20 2710 9	հում նավթ, նավթամթերք	1 տոննա	29450»

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 19.1-ին և 19.2-րդ տողերով.

«19.1.	3811	նյութեր (հավելանյութեր)	1 տոննա	43600
19.2.	3819 00 000 0	արգելակման, հիդրավլիկ և այլ հեղուկներ՝ պատրաստի, նախատեսված հիդրավլիկական փոխանցիչների համար, 70% զանգվածային բաժնից պակաս՝ բիտումային ապարներից ստացված նավթ կամ նավթամթերքներ չպարունակող կամ պարունակող	1 կգ	550»:

Հոդված 3. Օրենսգրքի 88-րդ հոդվածի 7-րդ մասում «բենզինի» բառերից հետո լրացնել «և նյութերի (հավելանյութերի)» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 346-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի 2-րդ կետում և 3-րդ մասում «հարկային տարվա որևէ ժամանակահատվածում» բառերից առաջ լրացնել «տվյալ հարկային տարվա կամ տվյալ հարկային տարվան նախորդող» բառերը,

2) 10-րդ մասի 1-ին կետի «գ» պարբերությունում և 11-րդ մասում «տարբեր տեսակների» բառերը փոխարինել «նույն կամ համանման» բառերով, իսկ «տարբերությունները» բառից հետո լրացնել «՝ պայմանով, որ ապրանքների ձեռք բերման գների կամ իրացման գների միջև տարբերությունը չի գերազանցում 20 տոկոսը» բառերը:

Հոդված ~~4~~5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 1-3-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա 1-ից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-910-09.09.2024-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
1.	**ՀՀ կառավարություն**	Նախագծի **1-ին հոդված, 1-ին կետ**	Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանված կարգավորումներին համապատասխան ԱՏԳ ԱԱ 2710 19 980 0 ծածկագրին դասվող ապրանքներն, այդ թվում՝ ավիայուղը, ներառված են ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքատեսակների ցանկում: Այդ ապրանքատեսակների ներմուծման մասով ներկայումս հաշվարկվում ու վճարվում է ակցիզային հարկ: Միաժամանակ, ԵՏՀ խորհրդի 14.09.2021թ. «Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագինը և Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկը հաստատելու մասին» N80 որոշմամբ տվյալ ապրանքատեսակների մասով առանձին ԱՏԳ ԱԱ ծածկագիր նախատեսված չէ, և այդ ապրանքները ներառված են ԱՏԳ ԱԱ 2710 19 ծածկագրին դասվող՝ այլ ապրանքատեսակների ցանկում և այդ ապրանքատեսակների տարանջատման մասով առանձին կարգավորումներ նախատեսված չեն: Ելնելով վերոնշյալից և այդ ապրանքատեսակների մասով ակցիզային հարկի հաշվարկման հարցերի հստակեցման համար, առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետից հանել «, բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 980 0 ծածկագրին դասվող ավիայուղի» բառերը:	Ընդունվել է: Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետից հանվել են «, բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2710 19 980 0 ծածկագրին դասվող ավիայուղի» բառերը:	Ընդունվել է:

2.	**ՀՀ կառավարություն**	**Նախագծի 4-րդ հոդված**	ՀՀ հարկային օրենսգրքի 346-րդ հոդվածով սահմանված են հարկային մարմնի կողմից իրականացվող չափագրումների վերաբերյալ կարգավորումները: Չափագրման ուսումնասիրության ընթացքում «հարկային տարվա» հասկացությունը հստակեցնելու համար առաջարկվում է սահմանել, որ 24 միլիոն դրամի շեմը վերաբերում է տվյալ հարկային տարվա կամ տվյալ հարկային տարվան նախորդող հարկային տարվա որևէ ժամանակահատվածում իրացման շրջանառությանը կամ համապատասխան փաստաթղթերով ձեռք բերված ապրանքների կամ ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծված ապրանքների մաքսային արժեքին, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծված ապրանքների մասով՝ սահմանված կարգով որոշվող ԱԱՀ-ով հարկման բազային (առանց ակցիզային հարկի): Միաժամանակ, առաջարկվում է հստակեցնել չափագրման ընթացքում ապրանքների տեսակավորման հետ կապված հարցերը: Այդ նպատակով առաջարկվում է սահմանել, որ չափագրման ընթացքում պակասորդի մեծությունը որոշվում է ըստ յուրաքանչյուր ապրանքի՝ հաշվի առնելով նույն ապրանքի տեսակավորման արդյունքում նույն կամ համանման ապրանքային պակասորդների և ավելցուկների տարբերությունները՝ պայմանով, որ ապրանքների ձեռք բերման գների կամ իրացման գների միջև տարբերությունը չի գերազանցում 20 տոկոսը: Ելնելով վերոնշյալից առաջարկվում է նախագիծը լրացնել նոր 4-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 4. Օրենսգրքի 346-րդ հոդվածի՝ 1) 2-րդ մասի 2-րդ կետում և 3-րդ մասում «հարկային	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Միաժամանակ, լրամշակված նախագծում նոր հոդվածի լրացման հետ կապված փոխվել է նախագծի ուժի մեջ մտնելու հոդվածի համարակալումը:	Ընդունվել է:

			տարվա որևէ ժամանակահատվածում» բառերից առաջ լրացնել «տվյալ հարկային տարվա կամ տվյալ հարկային տարվան նախորդող» բառերը, 2) 10-րդ մասի 1-ին կետի «գ» պարբերությունում և 11-րդ մասում «տարբեր տեսակների» բառերը փոխարինել «նույն կամ համանման» բառերով, իսկ «տարբերությունները» բառից հետո լրացնել «՝ պայմանով, որ ապրանքների ձեռք բերման գների կամ իրացման գների միջև տարբերությունը չի գերազանցում 20 տոկոսը» բառերը:»: Միաժամանակ, լրացվող հոդվածի ուժի մեջ մտնելու ժամկետ առաջարկվում է սահմանել 2025 թվականի հունվարի 1-ը: Այդ նպատակով առաջարկվում է լրամշակված նախագծի 5-րդ հոդվածում «պաշտոնական» բառից առաջ լրացնել «2025 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 1-3-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում սույն օրենքի» բառերը:		